

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԼԱՆԶԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021ԹԹ.
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
5. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
6. ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ուղորտներում), ՀԶԹ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության, լեռնային բնակավայրերի զարգացմանն ու աղքատության կրճատմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, կենսունակության ապահովման պայմանները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Ըստ արխիվային փաստաթղթերի և գրականության Մուսլուխլի գյուղը գտնվում է Ալեքսանդրապոլի գավառում (այժմ՝ Անիի շրջան) : ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1947թ. փետրվարի 2-ի հրամանագրով գյուղը վերանվանվել է Լանջիկ: Մուսլուխլի գյուղը 1852թ. ուներ 45 տուն, 16-ը՝ հայ, 29-ը՝ եզդի, ընդամենը 250 բնակիչ: Գյուղի հայ ընտանիքները 1849թ. տեղափոխվել են Ալեքսանդրապոլի գավառի Փամբակ տեղամասի Մարչապետ գյուղից: 1842թ. մարդահամարի տվյալներով նրանք գրանցված են եղել Սարչապետում: 1873թ. գյուղն ուներ 411, 1897թ.-ին՝ 664, 1926թ.-ին՝ 663, 1939թ.-ին 719, 1959թ.-ին՝ 699, 1970թ.-ին՝ 837, 1979թ.-ին՝ 777 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բասենի, Մուշի Շրջանների գյուղերից 1829-1830թթ.:; 1875թ. Մուսլուխլի գյուղի հայ կաթողիկե Աստվածածին եկեղեցու վերակացուն և քահանան եղել է Տեր-Աբրահամ Տեր-Աբրահամյանը:

1903թ. հիմնադրվել է գյուղի պետական մեկդասյա երկսեռ դպրոցը: 1908թ. գյուղն ունեցել է 2 ուսուցիչ և 65 աշակերտ:

1941-1945թվականների պատերազմի տարիներին գյուղից մասնակցել է շուրջ 200 մարդ, որից՝ 51-ը չեն վերադարձել և նրանց հիշատակին է նվիրված գյուղի հարևանությամբ կանգնեցված հուշարձան կոթողը: Բնակավայրի տարածքում պահպանվել են մատուռներ, բնակատեղիներ, գերեզմանոցներ: Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում է անասնապահությունը և հացահատիկային կուլտուրաների մշակությունը: Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է 1930-ական թվականներից հետո: Գյուղում կառուցվել է միջնակարգ դպրոց, սկուլմբ, գրադարան, բուժ. Կետ և առևտրի օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Լանջիկի սկզբնական շրջանում կոլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես հացահատիկի և մսի արտադրության բարձր ցուցանիշներով:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Լանջիկի միջնակարգ դպրոցը բոլոր ժամանակներում ունեցել է բարի ավանդույթներ և բարձր առաջադիմություն: Մեծ ճանաչում է ունեցել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ հանրապետությունում: Յուրանքանչյուր տարի, դպրոցի շրջանավարտները շատերը տեղ են զբաղեցնում հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Գյուղը գտնվում է Արագածի լեռնային գոտում ծովի մակարդակից 1960մ բարձրության վրա, 1499,55 հա վարչական տարածքով, որից գյուղի բնակատեղին է 60 հա:

Գյուղը ունի կտրտված ռելիեֆ: Աշխարհագրական դիրքը լեռնային է, կլիմայական

պայմանները՝ անբարենպաստ՝ ամենաբարձր ջերմաստիճանը, որը նկատվում է հուլիսի վերջին տ

ասնօրյակին և օգոստոսի առաջին տասնօրյակին՝ +30+35 °C: Ունի խստաշունչ և երկար

ձմեռ՝ ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին կազմում է -30-35°C:

Ջերմաստիճանային տատանման ամպլիտուտը կազմում է +35C -35°C:

Կլիման խիստ ցամաքային է: Հողերը ոռոգելի չեն: Հաշվարկված է, որ 1993թվականից

մինչև այսօր տարեկան մթնոլորտային տեղումների միջինը կազմում է 450մմ- 460մմ:

Արձանագրված է եղել, որ ամենացածր տարեկան տեղումները եղել են 1965-ին՝ 219մմ. և 1989 թվականին՝ 195մմ.:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է շինարարական ավազով ու կավով: Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1499,55հա., որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 1363,96հա-ը, այդ թվում 667,01հա՝ վարելահող, 660,43հա՝ արոտավայր և 36,52 հա այլ հողատեսքեր:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 12 կմ., մարզկենտրոնից 38կմ. և մայրաքաղաքից՝ 100կմ. հեռավորության վրա: Բնակավայրով է անցնում Գյումրի- Արմավիր-Երևան հանրապետական նշանակության ճանապարհը:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ արխիվային փաստաթղթերի և գրականության Մուսլուխլի գյուղը գտնվում է Ալեքսանդրապոլի գավառում (այժմ՝ Անիի շրջան) : ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1947թ. փետրվարի 2-ի հրամանագրով գյուղը վերանվանվել է Լանջիկ: Մուսլուխլի գյուղը 1852թ. ուներ 45 տուն, 16-ը՝ հայ, 29-ը՝ եզդի, ընդամենը 250 բնակիչ: Գյուղի հայ ընտանիքները 1849թ. տեղափոխվել են Ալեքսանդրապոլի գավառի Փամբակ տեղամասի Սարչապետ գյուղից: 1842թ. մարդահամարի տվյալներով նրանք գրանցված են եղել Սարչապետում: 1873թ. գյուղն ուներ 411, 1897թ.-ին՝ 664, 1926թ.-ին՝ 663, 1939թ.-ին 719, 1959թ.-ին՝ 699, 1970թ.-ին՝ 837, 1979թ.-ին՝ 777 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բասենի, Մուշի Շրջանների գյուղերից 1829-1830թթ.։ 1875թ. Մուսլուխլի գյուղի հայ կաթողիկե Աստվածածին եկեղեցու վերակացում և քահանան եղել է Տեր-Աբրահամ Տեր-Աբրահամյանը:

1903թ. հիմնադրվել է գյուղի պետական մեկդասյա երկսեռ դպրոցը: 1908թ. գյուղն ունեցել է 2 ուսուցիչ և 65 աշակերտ:

Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 30-40 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)

Համայնքում ժողովրդագրական իրավիճակի նկարագրության և կանխատեսման հիմնական ցուցանիշները 2016թվականի հունվարի 1-ի դրությամբ հետևյալներն են՝

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 997
Այդ թվում՝ տղամարդ - 490, կին՝ - 507,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 242,
- Առկա բնակչություն – 1007,
Այդ թվում՝ տղամարդ - 484, կին՝ - 523,
- Տնային տնտեսությունների քանակը – 242,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 227,

Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)

- Հայ – 1000
- ուրու – 7:

Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի /մարդ/

- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 4 տարեկան / - 54, որից՝ մինչև 1 տարեկան – 11
1-2 տարեկան – 12
3-4 տարեկան – 31
5-6 տարեկան - 27
- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 147
որից՝
7-14 տարեկան - 107
15-17 տարեկան - 54
- Հասուն տարիքի բնակչություն / 18-62 / - 698
- Տարեց բնակչություն / 63 և ավելի / - 81
- Համայնքի ընտրողների թիվը - 685:

Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)

- Ծնունդ - 11,
Որից կենդանի ծնունդ – 11,
- Մահ – 4.
- Ամուսնություն – 5,
- Ամուսնալուծություն – 0:

Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Հաշմանդամներ – 15, այդ թվում կանայք՝ 3,
որից՝ հաշմանդամ երեխա – 2,

- Միակողմանի ծնողագուրկ երեխա - 11,
- Կենսաթոշակատուներ – 127,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակատուներ – 5,
- Տարեց կենսաթոշակատուներ /75 տարեկան և բարձր/ - 35,

Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 25,
- Միայն կենսաթոշակատուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 5,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 1,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 70,
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 42:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 365,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 30,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 32,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 30,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 7,
- Աշակերտներ /16 տարեկան և բարձր/ - 21,
- Ուսանողներ – 15,
- Բանակում ծառայողներ – 10,
- Չունեն զբաղվածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 277,

Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 365,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 4,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 3,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 10,
- Տրանսպորտ և կապ – 1,
- Տեղական ինքնակառավարում – 8,

- Կրթություն – 26,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ –1,
- Ոսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ 24
- Բանակում ծառայողներ 15,

Միգրացիա /2012 թվականի ընթացքում

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 0,
որից` Հայաստանում այլ բնակավայր` 2.
արտերկիր` 0 :
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 220

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 91,
- Հիմնական – 70,
- Միջնակարգ -353,
- Միջնակարգ մասնագիտական – 155,
- Բարձրագույն - 78:

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքում ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով 2016 թվականի հոկտեմբերի 2-ի ընտրությունների արդյունքներով ձևավորվել է տեղական ինքնակառավարման մարմիններ` համայնքի ավագանու հինգ անդամներ և համայնքի ղեկավար:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է գյուղապետարանի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով`

Համայնքային ծառայության պաշտոններ`

- աշխատակազմի քարտուղար – 1 միավոր
- առաջատար մասնագետ- հաշվապահ – 1 միավոր
- առաջատար մասնագետ - 1 միավոր

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

- տնտեսավար -1միավոր
- գրադարանավար -1միավոր
- հավաքարար -1 միավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Վաղինակ Վարդանյան	1952թ.	բարձրագույն	անկուսակցական
2.	Միմոն Մինասյան	1969թ.	միջին մասնագիտական	անկուսակցական
3.	Մկրտիչ Գալոյան	1977թ.	Միջին հանրակրթական	անկուսակցական
4.	Արամ Հարությունյան	1984թ.	միջին հանրակրթական	անկուսակցական
5.	Զոյա Մելիքյան	1954թ.	միջին մասնագիտական	անկուսակցական

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

N	Պաշտոնը	Անուն, ազանուն	Կրթությունը	Ծննդյան թիվը
1	Համայնքի ղեկավար	Արա Մարդոյան	Բարձրագույն	1978թ.
2	Աշխատակազմի քարտուղար	Կարինե Գրիգորյան	Բարձրագույն	1962թ.
3	Առաջատար մասնագետ-հաշվապահ	Դավիթ Մինասյան	Բարձրագույն	1988թ.
4	Առաջատար մասնագետ	Աշխեն Մխիթարյան	բարձրագույն	1982թ.
5	Տնտեսավար	Սամվել Մինասյան	Ընդհանուր միջնակարգ	1946թ.
6	Գրադարանավար	Սուսաննա Հարությունյան	Նախնական մասնագիտական	1962թ.
7	Հավաքարար	Գոհար Ստեփանյան	Ընդհանուր միջնակարգ	1965թ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով,
- արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով:

1.5. ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. <<Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է:

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1960-ական թվականներին, ունի 3500մ. ընդհանուր երկարություն և երբևէ հիմնական նորոգման չի ենթարկվել: Հաճախակի են ցանցի վթարներն ու ջրի աղտոտումները, առանձին թաղամասեր ապահովված չեն խմելու ջրով: Պոմպակայանի 1 խորքային պոմպը նորոգման կարիք ունի:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային ճանապարհները:

Բարվոք վիճակում է „Համայնքային կենտրոն,, շենքը, որը հիմնանորոգվել է 2010թվականին ՍՈՑ. Ներդրումների հիմնադրամի կողմից և համայնքի ներդրման միջնոցներով, որտեղ տեղակայված են գյուղապետարանը, բուժ. կետը, գրադարանը և մշակույթի կենտրոնը, ԿՀԶ-ն և ՀԿՄ-Ն:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> շրջանակներում 2009 թվականին շահագործման է հանձնվել բնակավայրի գազաֆիկացման համակարգը: Սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված սպառիչ ցանցերի կառուցումը դեռևս ավարտված չէ և բնական գազից օգտվում են համայնքի տնտեսությունների միայն 60 տոկոսը:

Համայնքի սեփականության գույքի ցանկը

NN	անվանում	Չափի միավոր	Քանակ	Տեխ.վիճակ	Անհրաժեշտ է նորոգման
1	Համայնքային կենտրոն	հատ	1	լավ	ոչ
2	մանկապարտեզ	հատ	1	լավ	ոչ
3	Խմելու ջրի հին ցանց	կմ	2,5	ոչ բավարար	այո
4	Խմելու ջրի նոր ցանց	կմ	3	բավարար	ոչ
5	1941-1945թթ պատերազմի զոհերի հուշարձան	հատ	1	բավարար	ոչ
6	1988թ երկրաշարժի զոհերի հուշարձան	հատ	1	բավարար	ոչ
7	Գերեզման. պարիսպ	գծմ	850	բավարար	այո
8	Գազաֆիկացման ցանց	կմ	45	բավարար	ոչ

9	Ներհամայնքային գրունտե ճանապարհ	կմ	6,5	ոչ բավարար	այո
10	Մեքենա մարդատար	հատ	1	բավարար	այո

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր:

Կեղտաջրերի հեռացումը համայնքում կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով:

Բնակավայրում կանոնակարգված աղբահանություն չի իրականացվում: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է գյուղացիական տնտեսությունների և համայնքապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրեր կազմակերպելու միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի աղտոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 221 անհատական առանձնատներ՝ 28894,5 քմ. ընդհանուր մակերեսով և 1 բազմաբնակարան բնակելի շենք՝ Յսենյականոց 4 բնակարանով 555,2 քմ ընդհանուր մակերեսով: Բնակավայրը գտնվելով երկրաշարժի գոտում, համայնքի բնակֆոնդի մոտ

20 %-ը ստացել է 2-3 աստիճանի վնասվածություն և ենթակա է ուժեղացման ու վերանորոգման:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 35 երիտասարդ ընտանիքներ:

Համայնքում կա 7 անավարտ բնակելի տներ, որոնց շինարարությունը շուրջ 20 տարի է ինչ նախարեցված է համապատասխան միջոցների բացակայության պատճառով:

1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է Թալինի Հայջրմուղ կոյուղու կողմից: Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ուսումնասիրվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի: Համայնքին անհրաժեշտ է 20 տոննա տարողության ջրի կուտակիչ ջրավազան, որով կբարելավվի և կկանոնակարգվի բնակչության ջրամատակարարումը: Համայնքը չունի ոռոգման համակարգ:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Միջհամայնքային ճանապարհը ասֆալտապատ չէ:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային 6,5 կմ ճանապարհները: Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Բնակավայրը ապահովված է բջջային և ֆիկսված հեռախոսակապով:

Բնակավայրում տեղադրված է հեռուտաաշտարակ:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի 4 երթուղու միջոցով: Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապը ապահովվում է Գյումրի-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով:

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է: Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ: Համայնքը անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ծրագրի, <<Հայաստան համահայկական հիմնադրամի>>, <<Սոցիալական ներդրումների հիմնադրամի>>, <<Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի>>, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը ունի գործող եկեղեցի և համագործակցում է Շիրակի Կաթողիկե Առաջնորդարանի հետ:

1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 221: Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Մոտ 250 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի, 54 մարդ աշխատում է համայնքի տարբեր հաստատություններում:

Համայնքն ունի 1499,55հա վարչական տարածք:

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր	1363,96հա, որից՝
1) վարելահող	667,01հա
2) արոտ	660,43 հա
3) այլ հողեր	36,52 հա
2. Բնակավայրի հողեր	108,03հա, որից՝
4) տնամերձ	77,92 հա
5) հասարակական կառուցապատման	3,14 հա

6) ընդհանուր օգտագործման	17,41 հա
7) այլ հողեր	9,53 հա
3.Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	7,13 հա
4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	7,31 հա
5. Հատուկ պահպանվող տարածքներ	8,5 հա
6. Ջրային հողեր	4,65 հա

Ընդամենը՝ վարչատարածքը	1499,55 հա, որից՝
քաղաքացիների սեփականության հողեր	653,66 հա
իրավաբանական անձանց սեփականության հողեր	0,45 հա
համայնքային սեփականության հողեր	815,95 հա
պետական սեփականության հողեր	29,49 հա:

Համայնքում գյուղատնտեսությամբ զբաղվում են շուրջ 192 գյուղացիական տնտեսություններ: Չունենալով որոգելի ջուր նշված հողատեսքերի մշակումից ստացված եկամուտը շատ ցածր է նույնն է նաև անասնապահական ոլորտում, որն էլ հիմնականում պատճառն է արտագնա աշխատանքի:

Արտադրված գյուղ մթերքները հազիվ բավարարում են համայնքի բնակիչների սպառմանը: Չնչին ավելցուկը իրացվում է տարբեր տեսակի ապրանքների հետ փոխանակումով: Գյուղում գործում են առևտրի երեք փոքր օբյեկտներ, որոնք հազիվ են բավարարում համայնքի բնակիչների սպառմանը, որի պատճառով էլ հիմնական առևտուրը իրականացվում է ներկրվող ավտոմեքենաներով՝ շրջիկ ձևով: Անասնապահությամբ զբաղվում են շուրջ 150 տնտեսություններ:

Բնակիչների դրամական միջոցները հիմնականում գոյանում են արտագնա աշխատանքից, աշխատավարձերից, կենսաթոշակներից և ընտանեկան նպաստներից:

1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի բացակայության պատճառով համայնքը լուրջ ժվարությունների առաջ է կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու հարցում:

Համայնքում կազմավորված են 190 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 667հա վարելահող: Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի և գարու արտադրությամբ: Արտադրության արդյունավետությունը կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 20-25 ցենտներ: Երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100%:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 494 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 252 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 657 : Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ և մեղվապահությամբ:

Գյուղում կա 20 տրակտոր, 2 կոմբայն, 4 խոտհնձիչ, 13 բեռնատար ավտոմեքենա և այլ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղտնտեսական նշանակության հողեր, որից՝	1363,96	1327,44
Վարելահող	667,01	667,01
Արոտավայրեր	660,43	660,43
Այլ հողեր	9,53	-

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

ՀՀ	Ցանկատարածությունների կառուցվածքը	2016 թվական		% -ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /667,01հա/
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
1.	Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝	580,0	3,3	86,9
	Ցորեն	285,0	3.4	42,7
	Գարի	295,0	3.2	44,2
	Այլ հացահատիկային մշակաբույսեր			
2.	Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝	78,0	5.87	11,7
	Կորնզան	78	5.87	11,7
	Առվույտ			
3.	Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝	-	-	-
	Կարտոֆիլ	-	-	-
	Կաղամբ	-	-	-
	Գազար	-	-	-
	Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	-	-	-
4.	Այլ /ցեղ/	-	-	-

	ԸՆԴԱՄԵՆԸ	658.0		
--	-----------------	--------------	--	--

3. Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը /բերքատվություն/

Մշակաբույսի տեսակը	2016 թվական
Հացահատիկ	
Ցանկատարածքը /հա/	667,01
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	3.3
Համախառն բերքը/տոննա/	2300
մշակաբույսեր	
Ցանկատարածքը	-
1 հեկտարի միջին բերքատվությունը	-
Համախառն բերքը	-

4. Անասնազյխաբանակը

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	/գլուխ/ 01.01.2016թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	494
որից կովեր	252
Խոզեր	73
ոչխարներ և այծեր	584
թռչուններ	1135
մեղվաբնտանիքներ	73

5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական
Մթերատվությունը	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	100
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1500
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2.6
1 հավի ձվատվությունը /հատ/	150
1 մեղվաբնտանիքի մթերատվությունը /կգ/	12.0
Արտադրության ծավալները	
Մսի արտադրություն /տոննա/	20.5
Կաթի արտադրություն /տոննա/	864.5
Բրդի արտադրություն /տոննա/	0.8
Չվի արտադրություն /հազ. հատ/	55.0
Մեղրի արտադրություն /տոննա/	6.7

6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	4
Անվավոր տրակտոր	հատ	18
Հացահատրկային կոմբայն	հատ	2
Խոտհնձիչ կոմբայն	հատ	4
Բեռնատար ավտոմեքենա	հատ	13
Տրակտորային կցասայլ	հատ	10
Գուլթան	հատ	3
Կուլտիվատոր	հատ	3
Շարքացան	հատ	4
Հակավորող մեքենա	հատ	5

1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չեն գործում
 Համայնքում կարող է զարգանալ գյուղատնտեսական մթերքների վերամշակաման ճյուղը /մսամթերքի արտադրություն, կաթի վերամշակում և այլն/:

1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- *Առողջապահություն*

Համայնքում առողջապահական գործընթացն իրականացվում է բուժ. Կետի միջոցով, որը տեղակայված է „Համայնքային կենտրոն,, շենքում: Ապահովված է առաջին անհրաժեշտության պարագաներով: Բուժ. Կետում կատարվում է պրոֆիլակտիկ պատվաստում և բժշկական այլ ծառայություններ՝ համայնքային բուժքրոջ միջոցով, նորմալ պայմաններում և նորմալ սպասարկումով:

- *Կրթություն*

Գյուղը ունի միջնակարգ դպրոց, որը հիմնանորոգվել է 2006-20007թվականներին պետական բյուջեի միջոցներով, ապահովված է մասնագետ- ուսուցիչներով, սակայն հազեցված չեն լաբորատորիաներով և արդի գույքով:

Վերջին տարիներին նկատվում է աշակերտների քանակի նվազեցում՝ հանրապետության քաղաքներում տեղափոխվելու և ծնելիության նվազեցման պատճառով: 2016-2017 թթ ուսումնական տարում դպրոցում սովորում էր 155 աշակերտ, նախակրթարանում՝ 25 երեխա Գյուղում գործում է մանկապարտեզ, որն ունի 25 սան:

- *Մշակույթ, սպորտ և հոգևոր դաստիարակություն*

Համայնքն ունի 1 մշակույթի տուն՝ կառուցված 1970-ական թվականներին, հիմնանորոգվել է 2010թ.-ին և վերանվանվել է <<Համայնքային կենտրոն>>-ի: <<Համայնքային կենտրոն>>-ում տեղակայված է գրադարանը՝ մոտ 7300 գրքով, բուժկետը, գյուղապետարանը և 2008թ.-ին կանայք հանուն զարգացման ծրագրի շրջանակներում համայնքային կենտրոն սենյակը: Կանայք հանուն զարգացման հասարակական կազմակերպության կողմից բացված համայնքային կենտրոնում

հիմնադիր մասնագետները օգնում են գյուղում բնակվող կանանց հաղթահարելու հոգեբանական և տնտեսական դժվարությունները: Գյուղում գործում է նաև 1 կաթողիկե եկեղեցի, որն իր դերն ունշանակությունն ունի համայնքի հոգևոր զարգացման գործում: Գյուղը ունի գազաֆիկացման ներքին ցանց, անհրաժեշտ է որ այդ ցանցը ընդլայնվի դեպի գյուղի ծայրամասեր: Ներհամայնքային գրունտե ճանապարհացանցը գյուղի աշխարհագրական դիրքի պատճառով սիստեմատիկ կերպով ձյան հալոցների, անձրևների ազդեցությունից քայքայվել է: Ամեն տարի անհրաժեշտ է լինում կատարել փոսային լցումներ: Չնայած գյուղը հիմնականում ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, բայց խիստ կարիք ունի խմելու ջրի ջրավազանի առկայության, հին ցանցերը վերանորոգելու, ջրի կորուստները վերացնելու համար: Համայնքը չունի հանգստի գոտի և հարմարություններ չկան բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երեխաների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Հանրապետական նշանակության Գյումրի-Երևան ճանապարհին մոտ գտնվելը
- Դպրոցի, մանկապարտեզի, համայնքային կենտրոնի առկայությունը
- Հեղախոսակապ ունենալը, ինտերնետային կապի առկայությունը
- Հեռուստահաղորդումների բավարար մակարդակը
- Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցի առկայությունը
- Գազաֆիկացումը
- Գյուղում բարձրագույն կրթությամբ մասնագետների առկայությունը:

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգելի ջուր չունենալը
- Բնակլիմայական վատ պայմանները
- Գործազրկությունը
- Խմելու ջրի կարգավորիչ (ջրավազանի) բացակայությունը:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը, օրական կարգավորիչ ջրամբարի և ջրաչափերի բացակայությունը:
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները:

1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրում:

1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/.
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Համայնքի ռազմավարությունն է՝

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքը գտնվելով անբարենպաստ բնակլիմայական պայմաններում, ելնելով իր աշխարհագրական դիրքից պետք է վարի ռազմավարական այնպիսի ճիշտ քաղաքականություն, որը խթան հանդիսանա համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այդ իսկ պատճառով գյուղապետարանը և ավագանին ելնելով վերոհիշյալից՝ նպատակային բյուջետավորման գործընթացի ճիշտ իրականացմամբ, պիտի կարողանան նախատեսել համայնքի 2017-2021թթ. հիմնախնդիրները, որը խթան են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ըստ որի էլ հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը: Քանի որ համայնքը հիմնականում զբաղվում է գյուղ. մթերքների արտադրությամբ, հետևաբար առաջնային նպատակը պիտի լինի գյուղատնտեսության զարգացումը հետևյալ ուղղություններով՝

- Նոր էլիտար սերմերի (գարի-ցորեն) ներմուծում
- Անասունների տոհմային բարելավում
- Գյուղ. մթերքների մանր և միջին բիզնեսի ձևավորում
- Կաթի վերամշակման կետի ստեղծում
- Տավարի, խոզի և ոչխարի մսի վաճառքի արտահանման կազմակերպում
- Հանքային պարարտանյութերի նորմատիվային օգտագործում.

Թվարկվածներին հասնելու համար անհրաժեշտ է ըստ առանձին բնագավառների մշակել առաջնահերթ ծրագրեր, հեռանկարային այնպիսի նպատակներ և կոնկրետ խնդիրների ձևակերպում, որոնք հիմք կհանդիսանան նախապայմաններ դառնալու նշված հիմնահարցերի լուծմանը, զարգացմանը և գյուղացուն կապելու իր հող ու ջրին: Այս ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունը իրականացնելու համար իհարկե բավարար չեն լինի տեղական բյուջեի միջոցները: Այդ իսկ պատճառով պետք է ռացիոնալ օգտագործվի համայնքի աշխատուժը, մտավոր պոտենցիալը ակնկալելով նաև պետության օգնությունը ու օժանդակությունը և տարբեր բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցելու կարողությունը:

2.2. Հիմնական նպատակները

- Ոռոգման համակարգի կառուցում:
- Բնակավայրի կոյուղու ցանցի կառուցում:
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի ընդլայնում, կուտակիչ ջրավազանի կառուցում:
- Հանգստի գոտու կառուցում:

7	միջհամայնքային ճանապարհների երկարությունը	կմ	2,5	2,5	2,5	2,5	2,5	2,5
8	ներհամայնքային փողոցների երկարությունը	կմ	6,5	6,5	6,5	6,5	6,5	6,5
	գրունտային փողոցներ	կմ	6,5	6,5	6,5	6,5	6,5	6,5,
9	բնակ.ֆոնդը, առանձնատուն, այդ թվում	հատ	221	223	225	230	235	240
	մասնավոր	հատ	221	223	225	230	235	250
10	կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	42	32	25	23	25	10
11	մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	220	230	240	245	250	260
12	նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1
	երեխաների թիվը	մարդ	25	25	25	25	25	25
13	դպրոցների թիվը, որից`	հատ	1	1	1	1	1	1
14	միջնակարգ /սովորողների թիվը	հատ/ մարդ	135	135	140	141	150	155
15	Նախակրթարանի երեխաների թիվը	Հատ/ մարդ	25	25	25	28	30	45
16	բուժ.կետ	հատ	1	1	1	1	1	1
	բժիշկների թիվը	մարդ	-	-	-	-	-	
	կրտսեր բուժանձնակազմ	մարդ	1	1	1	1	1	
17	«Փարոս» համակարգում գրանցված ընտանիքների թիվը	հատ	42	32	25	23	25	10
18	բնակչության մեկ շնչին ընկնող համայնքի բյուջետային եկամուտները	հազար դրամ	11,5	11,6	13,5	13,9	14,5	15

5. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարտզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների

վերլուծությունը, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2012- 2016թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրարերը՝

- Լուսավորության ցանցի ընդլայնում ծրագրի արժեքն է՝ , 3000000 (երեք միլիոն) դրամ.
- Գազաֆիկացման ներքին ցանցի ընդլայնում, ծրագրի արժեքն է՝ 4000000 (չորս միլիոն) դրամ.
- Մանկապարտեզի պարսպապատում և խաղահրապարակի ստեղծում ծրագրի արժեքն է՝ 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ.
- Աղբարկղերի տեղադրում, ծրագրի արժեքն է՝ 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ.
- Գերեզմանատան տարածքի բարեկարգում, մաքրում, ծրագրի արժեքն է՝ 700000 (յոթ հարյուր հազար) դրամ.
- Ներհամայնքային փողոցների վերանորոգում, ծրագրի արժեքն է՝ 1840000 (մեկ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) դրամ.
- <<Համայնքային կենտրոնի>> դահլիճը կահավորելու համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում, ծրագրի արժեքն է՝ 4000000 (չորս միլիոն) դրամ
- համայնքի խաղահրապարակի և կանաչ գոտու ստեղծում:

Ծ Ր Ա Գ Ի Դ թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում:

ՀԻՄՆԱԽՆԴԻ ԼԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շուրջ 4 տարի է ինչ գործում է համայնքի կենտրոնական փողոցի զիշերային լուսավորության ցանցը: Մնացած փողոցներում ցանցի բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության զիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր, երբ համայնքի բնակիչները զիշերային ժամերին ենթարկվել են թափառող շների հարձակումներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի անցկացման տեխնիկական հնարավորությունները և կազմել լուսարձակների տեղաբաշխման սխեմա:
- Պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- <<Հայաստանի էլեկտրացանցեր>> ընկերության հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագիր՝ լուսավորության ցանցի էլ սնուցման թույլտվություն և տեխնիկական պայմաններ ստանալու համար:
- Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարել մրցույթ և ընտրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը կառուցող շինարարական կազմակերպությունը:
- Ըստ նախնական հաշվարկների բնակավայրի թիվ թվով 2, 3, 4, 5,6,7, 8 և10 փողոցներում տեղադրել թվով 40 լուսարձակներ:
- Ըստ ամենայնի աջակցել լուսավորության ցանցը կառուցման շինարարական աշխատանքներին:
- Ապահովել ցանցի շահագործումը և անխափան աշխատանքնը:
- Ցանցի շահագործումն և սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիշերային լուսավորության ցանցի կառուցմամբ կապահովվի համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների գիշերային լուսավորության ցանցի կառուցման և թվով 40 լուսարձակների տեղադրման համար կպահանջվի 4.0 մլն. դրամի ներդրում: Ծրագիրն իրականացել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2017-2018թթ.:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Լանջիկ համայնքի միջհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների և տրանսպորտային միջոցների համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները, մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները :

ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավագե ծածկույթով հարթեցման են ենթակա համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային 1050զծմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածներ՝ 5250քառ.մ. ընդհանուր մակերեսով, այդ թվում՝

- Փողոց թիվ 2 – 300զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1500քառ.մ.
- Փողոց թիվ 3 – 100զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
- Փողոց թիվ 4 – 200զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000քառ.մ.
- Փողոց թիվ 5 – 50զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 250քառ.մ.
- Փողոց թիվ 6 – 100զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
- Փողոց թիվ 7 – 100զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
- Փողոց թիվ 8 – 100զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
- Փողոց թիվ 10 – 100զժ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.

Ընդամենը՝ 1050զժ. մ. մակերեսը՝ 5250քառ.մ.

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ներհամայնքային ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ:

Սանիտարական մաքրման է ենթակա 10000 քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 10 խ.մ. շինարարական և կենցաղային աղբ:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

<i>Հ/հ</i>	<i>Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,</i>	<i>Չափի միավոր</i>	<i>Քանակը</i>	<i>Միավորի արժեքը /դրամ/</i>	<i>Ընդհանուր արժեքը /դրամ/</i>	<i>Նշումներ</i>
------------	--	--------------------	---------------	------------------------------	--------------------------------	-----------------

Տեխնիկական միջոցների շահագործում

1	Էքսկավատորի շահագործում /հարթեցման աշխատանքներ/	Ժամ	150	2000	300000	
2	Բարձիչ մեխանիզմով բարձման ախատանքների իրականացում՝ -հանքակոպիճի բարձում՝ 100իւ.մ. -ավազի բարձում՝ 80իւ.մ. - շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 20իւ.մ.	Խոր.մ	200	1200	240000	
3	Ինքնաթափի միջոցով հանքակոպիճի, ավազի և աղբի տեղափոխում	Խոր.մ	200	612.5	300000	
	Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում	X	X	X	840000	
Աշխատանք						
1.	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	Քառ.մ	10000	X	X	Համայնքի անդամներ
	Ընդամենը աշխատանք	X	X	X	X	
Նյութեր						
1	Հանքակոպիճ	Խոր.մ	100	X	X	Համայնքի ներդրում
2	Ավազ	Խոր.մ	80	X	X	Համայնքի ներդրում
3	Դիզելային վառելանյութ	լիտր	2000	500	1000000	
	Ընդամենը նյութեր				1000000	
	Ընդամենը ծախսեր				1840000	

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 1840 հազ. դրամի ներդրում,

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2019թ.:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

Ծ Ր Ա Գ Ր Ի Դ թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի „Համայնքային կենտրոն,-ի դահլիճին անհրաժեշտ գույքի ապահովում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի „Համայնքային կենտրոնի,, նախկին մշակույթի տան դահլիճը վերանորոգումից հետո մինչև օրս չունի համապատասխան գույք՝ բեմի կահավորանք, դահլիճային աթոռներ և սարքավորումներ: Համայնքային կենտրոնը համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օջախն է, որտեղ տեղակայված են գյուղական գրադարանը իր 7400 կտոր գրականությամբ, բուժկետը և գյուղապետարանը:

Համայնքային կենտրոնում համապատասխան գույքի բացակայության պատճառով մշակութային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում և այն հիմնականում չի ծառայում համայնքի բնակչության կարիքների համար: Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել գույքի ձեռքբերման մեծածավալ աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, տեղական կամ միջազգային ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

„Համայնքային կենտրոնի,,-ի դահլիճը համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար: Վերականգնել համայնքի մշակութային նախկին ավադությունները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին /ՀՄՆՀ / ներկայացնել „Համայնքային կենտրոնի,, -ի դահլիճի գույքի համալրման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել „Համայնքային կենտրոնի,,-ի դահլիճի գույքի ձեռքբերման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, պահովել ծրագրի կառավարումը:
- Ապահովել ՀՄՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

„Համայնքային կենտրոնի,, ի դահլիճը ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու միջոցով հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 4.0 մլն.
 դրամի ներդրում, որի 10 տոկոսը՝ պարտավորվում է ապահովելու համայնքը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսել իրականացնել 2020 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել մշակույթի տան պահպանումը և սպասարկումը:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

Ծ Ր Ա Գ Ի Դ թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի կենտրոնական փողոցում 3 աղբարկղների ձեռքբերում և տեղադրում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Կապահովվի համայնքի կենտրոնական փողոցի մաքրությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է սպասարարահի կառուցման շնորհիվ բարելավել համայնքի բնակչության կյանքը :

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի կենտրոնական փողոցների երեք անհրաժեշտ տեղերում աղբարկղների անհրաժեշտությունը:
- Ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ::
- Ըստ նախնական հաշվարկների թիվ 1 փողոցի երեք կանգառներում տեղադրել աղբարկղեր:
- Ապահովել աղբարկղների շահագործումը:
- Աղբարկղների շահագործումն և սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աղբարկղների տեղադրմամբ կբարելավվի համայնքի բնակչության կյանքը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների սպասարահների կառուցման համար կպահանջվի 1.5 մլն. դրամի ներդրում: Ծրագիրն իրականացել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2018թ.

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

Ծ Ր Ա Գ Ր Ի Դ թիվ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի խաղահրապարակի և կանաչ գոտու ստեղծում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համյանքը չունի երիտասարդության ժամանցի անցկացման վայր : Համայնքի կենտրոնում Առակա է 1հա այնպիսի տարածք, որտեղ վերակառուցման-վերանորոգման աշխատանքներից հետո կարող ենք ունենալ , ծաղկանոցներ, կանաչ գոտի, կտեղադրվեն որակյալ նստարաններ ու աղբամաններ, կունենանք արտաքին լուսավորություն կարող է ծառայել նաև սպորտի համար,

Շինարարությունն ավարտվելուց հետո Լանջիկը կունենա ժամանակակից զբոսայգի, որը երիտասարդների համար կծառայի որպես հավաքատեղի և ժամանցի վայր:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բարեկարգման միջոցառումներով գեղեցկացնել Լանջիկի արտաքին տեսքն ու ստեղծել ազգաբնակչության կենսամակարդակը բարձրացնող անհրաժեշտ պայմաններ, խթանել համայնքում սպորտի զարգացմանը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Նախապատրաստել տարածքը վերանորոգման համար
- Կատարել տարածքի բարեկարգում և ցանկապատում
- Կատարել կանաչապատում
- Կատարել տարածքի ջրամատակարարումը
- Նստարանների տեղադրում

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կբարելավվի համայնքի բնակչության կենսամակարդակը, կունենանք սպորտով զբաղվող և ակտիվ ապրելակերպով համայնքի բնակիչ:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախատեսվում նախնական հաշվարկների կպահանջվի 10.0 մլն. դրամ:

Ծրագրի իրականացման աշխատանքներին ներգրավել համայնքի աշխատունակ բնակչությանը և համայնքում առկա տրանսպորտային ու տեխնիկական միջոցները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Նախատեսվում է աշխատանքներն իրականացնել 2018-2021թթ.

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

, Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

Ծ Ր Ա Գ Ի Ը թիվ 6

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆ ԼԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շուրջ 2 տարի է ինչ գործում է համայնքի կենտրոնական փողոցի գիշերային լուսավորության ցանցը: Մնացած փողոցներում ցանցի բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր, երբ համայնքի բնակիչները գիշերային ժամերին ենթարկվել են թափառող շների հարձակումներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի անցկացման տեխնիկական հնարավորությունները և կազմել լուսարձակների տեղաբաշխման սխեմա:
- Պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- <<Հայաստանի էլեկտրացանցեր>> ընկերության հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագիր՝ լուսավորության ցանցի էլ սնուցման թույլտվություն և տեխնիկական պայմաններ ստանալու համար:
- Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարել մրցույթ և ընտրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը կառուցող շինարարական կազմակերպությունը:
- Ըստ նախնական հաշվարկների բնակավայրի թիվ թվով 2, 3, 4, 5,6,7, 8 և10 փողոցներում տեղադրել թվով 40 լուսարձակներ:
- Ըստ ամենայնի աջակցել լուսավորության ցանցը կառուցման շինարարական աշխատանքներին:
- Ապահովել ցանցի շահագործումը և անխափան աշխատանքներ:

- Ցանցի շահագործումն և սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիշերային լուսավորության ցանցի կառուցմամբ կապահովվի համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների գիշերային լուսավորության ցանցի կառուցման և թվով 40 լուսարձակների տեղադրման համար կպահանջվի 3.0 մլն. դրամի ներդրում: Ծրագիրն իրականացել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2014թ. մայիս-օգոստոս ամիսներին:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 7

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի մանկապարտեզի տարածքի ցանկապատում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում առկա է հիմնանորոգված և գործող մանկապարտեզ , որն ունի 3-4 տարեկան 25 սան: Մանկապարտեզի տարածքը մի մասը ցանկապատ չունի մի մասն էլ արդեն քայքայվել և քանդվել է: Շենքը գտնվում է կենտրոնական փողոցին մոտ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապահովել մանկապարտեզի երեխաների անվտանգությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի մանկապարտեզի ցանկապատը:

- Պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ::
- Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարել մրցույթ և ընտրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը կառուցող շինարարական կազմակերպությունը:
- Ըստ ամենայնի աջակցել ցանկապատի կառուցման շինարարական աշխատանքներին:
- Ապահովել ցանկապատի շահագործումը և անխափան աշխատանքը:
- Ցանցի շահագործումն և սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ցանկապատի կառուցմամբ կապահովվի մանկապարտեզի սաների անվտանգությունը::

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների 2,5.0 մլն. դրամի ներդրում:

Ծրագիրն իրականացել համայնքի բյուջեի միջոցներով և արտաքին ներդրումներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2000թ.:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Լանջիկ համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մարդոյան:

11.Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի հնգամյա 2017-2021 թվականների ծրագիրը կազմելիս հաշվի է առնված տեղական բյուջեի 2016-2017 թվականների փաստացի և 2018-2021 թվականների կանխատեսվող եկամուտները: Համայնքը չունենալով արտադրական օբյեկտներ և այլ հիմնարկ-ձեռնարկություններ՝ ինչպես երևում է «համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում» հավելվածից բյուջեի աճման հիմնական աղբյուր է հանդիսանում պետության կողմից հատկացված դոտացիաները: Հետևաբար համայնքի զարգացման քառամյա ծրագրի դրույթները սերտորեն կապված են նշվածից: Չնայած դրան ծրագրում տեղ են գտել մի շարք հիմնախնդիրներ, որոնք ընդգրկված են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից մշակված գյուղերի զարգացման ծրագրերում:

Հնգամյա ծրագրի իրականցումը անխազելիորեն կապված է նաև առանձին հիմնադրամների հետ համագործակցությունից: Զարգացման հնգամյա ծրագրի և բյուջեի փոխադարձ կապը ապահովելու նպատակով խիստ ուշադրություն է դարձվել սեփական եկամուտներով կատարվելիք ծրագրերի ընդգրկմանը: Ծրագիրը առաջիկա հնգամյա ժամանակահատվածի համար ստացված լուծումներով նպաստելու է ծրագրային բյուջետավորմանը և բյուջեն ավելի հիմնավորված դարձնելու պահանջի իրագործմանը: Ծրագրի մշակման և կազմման գործընթացին մեծ մասնակցություն է ունեցել համայնքի ավագանին և համայնքապետարանի աշխատակազմը: Արված է հնարավոր ամեն ինչ ծրագրի մշակումը և ընդունումը թափանցիկ ու հրապարակային դարձնելու, դրանում հասարակության լայն մասնակցություն ապահովելու համար:

Լանջիկ համայնքի ղեկավար՝
2016 թվական դեկտեմբերի 26,
գ.Լանջիկ

Ա. Մարդոյան